ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թեստային առաջադրանքների մշակման

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5

2. ԹԵՍՏԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ 5

3. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 9

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցը կազմվել է Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի և դրանից բխող իրավական ակտերի հիման վրա:

Ուղեցույցի նպատակն է օգնելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության համակարգի մարմիններին՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների թեստային առաջադրանքները ձևավորելու, բովանդակային առանձնահատկությունները սահմանելու, թեստերը կազմելու գործընթացը ճիշտ կազմակերպելու և նշված գործընթացը կարգավորող իրավանորմերի պատշաճ կիրառումն ապահովելու հարցերում:

Թեստերը կազմելիս պետք է հստակեցնել, թե ինչ նպատակ է հետապնդում այն, այսինքն՝ թեստը նախատեսված է մեկ, թե մի քանի բնագավառներից դիմորդների գիտելիքները ստուգելու համար: Յուրաքանչյուր թեստի շրջանակներում կարելի է առանձնացնել թեստային առաջադրանքների մի քանի տեսակներ՝ պատասխանների տարբեր ձևերով:

Թեստի տեսակի և բնույթի ընտրությունը որոշվում է նախ և առաջ այն նպատակներով, որոնց համար իրականացվում է թեստավորումը, նյութի բնույթով, բարդության աստիճանով: Թեստային առաջադրանքների բնագավառների ընտրությունը պետք է պայմանավորվի տվյալ մարմնի գործունեության հիմնական ոլորտներով և տվյալ պաշտոնի առանձնահատկություններով: Պաշտոնների տարբեր ենթախմբերի համար կազմվող թեստերը պետք է տարբերվեն թեստային առաջադրանքների բարդության մակարդակով: Որքան բարձր է պաշտոնի ենթախումբը, այնքան գիտելիքների ստուգման թեստային առաջադրանքները պետք է բարդ լինեն: Բարդ տիպի թեստերը կարող են կազմվել այնպիսի թեստային առաջադրանքներից, որոնք պահանջում են ինտեգրված, փոխկապակցված գիտելիքներ տարբեր բնագավառներից, և որոնց նպատակն է ստուգել գիտելիքների տիրապետման տարբեր մակարդակներ՝ կոնկրետ բնագավառից

կամ որոնք կոչված են ստուգելու կոնկրետ հնարավորություններ և ունակություններ (վիճակագրական, վերլուծական, լեզվական և այլն):

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ուղեցույցում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1. **Թեստ՝** թեստային առաջադրանքների համակարգ, որի միջոցով ստուգվում է թեստավորվողի մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման մակարդակը:
2. **Թեստային առաջադրանք՝** ստուգողական խնդիր կամ հարց՝ պարտադիր կատարման պահանջով կամ ենթադրյալ ճիշտ և սխալ պատասխաններով, կամ գործողության որոշակի ալգորիթմով:

2. ԹԵՍՏԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

2.1 Թեստերի բովանդակային առանձնահատկությունները.

Թափուր պաշտոնների համալրման համար համապատասխան մարմինները պետք է մշակեն հավակնորդների մասնագիտական գիտելիքները ստուգող թեստային առաջադրանքներ: Մասնագիտական գիտելիքների ստուգման համար գոյություն ունեն տարբեր բովանդակությամբ թեստային առաջադրանքների տեսակներ:

Մասնագիտական գիտելիքները ստուգող թեստերը *սովորաբար, բազմակի ընտրության (*multiple choice) հարցեր են, որոնք ստուգում են տեխնիկական կամ մասնագիտական գիտելիքները, որոնք անհրաժեշտ են աշխատանքային պարտականությունների կատարման համար:

2.2 Թեստային առաջադրանքների ձևերը.

Թեստային առաջադրանքները կարող են ունենալ հետևյալ ձևերը՝

1) ճիշտ պատասխանի ընտրություն.

2) այլընտրանքային ընտրություն.

3) համապատասխանության որոշում.

4) հաջորդականության որոշում:

Թեստային առաջադրանքները մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր:

Յուրաքանչյուր թեստային առաջադրանքի վերջում պետք է նշել հարցի աղբյուրը («Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, հոդված 13, մաս 1, կետ 5):

1) Թեստային առաջադրանքի **«Ճիշտ պատասխանի ընտրություն»** ձևը մշակելիս անհրաժեշտ է հիշել, որ հարցը պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան, որոնցից միայն մեկն է միանշանակ ճիշտ պատասխանը (Օրինակ 1):

Օրինակ 1

Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն

Հարց 1

Ո՞ր իրավական ակտերին պետք է համապատասխանեն օրենքները:

☐ 1. Հանրապետության Նախագահի հրամանագրերին և ՀՀ կառավարության որոշումներին.

☐ 2. Սահմանադրական օրենքներին.

☐ 3. Այլ օրենքներին և Սահմանադրական դատարանի որոշումներին.

☐ 4. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին և միջազգային պայմանագրերին:

(2, ՀՀ Սահմանադրություն, հոդված 5, մաս 2)

2) Թեստային առաջադրանքի **«Այլընտրանքային ընտրություն»** ձևը մշակելիս անհրաժեշտ է, որ հարցը ունենա «Այո» կամ «Ոչ» պատասխաններ, որոնցից միայն մեկն է միանշանակ ճիշտ պատասխանը (Օրինակ 2):

Օրինակ 2

Ձև 2. Այլընտրանքային ընտրություն

Հարց 2

Ճի՞շտ է արդյոք, որ Ազգային ժողովի փակ նիստում քվեարկությունն արգելված է:

☐ 1. Այո.

☐ 2. Ոչ:

(1, ՀՀ Սահմանադրություն, հոդված 101, մաս 2)

3) Թեստային առաջադրանքի **«Համապատասխանության որոշում»** ձևը մշակելիս պետք է կազմել աջ ու ձախ սյունակներ: Ձախ սյունակը պետք է բաղկացած լինի տերմիններից, իսկ աջը՝ մեկնաբանություններից: Պատասխանների դասավորվածությունը նշող թվերի համադրությունից միայն մեկն է միանշանակ ճիշտ պատասխանը, որի ընտրության դեպքում ձախ սյունակի տերմինները կհամապատասխանեն աջ սյունակի մեկնաբանություններին (Օրինակ 3):

Օրինակ 3

Ձև 3. Համապատասխանության որոշում

Հարց 3

Դասավորե՛ք ըստ համապատասխանության՝ ձախ սյունակի տերմինները և աջ սյունակի մեկնաբանությունները:

1. Կոմպետենցիա՝	Ա. տեղեկությունների, հասկացությունների, մտքերի, փաստերի և հանգամանքների ամբողջություն, որն անհրաժեշտ է պատոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար.
2. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում՝	Բ. գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի ամբողջություն, որն անհրաժեշտ է պատոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար.
3. Մասնագիտական գիտելիք՝	Գ. քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում քաղաքացիական ծառայության պաշտոնի համապատասխան խմբի նույն ենթախմբում ընդգրկված քաղաքացիական ծառայության պաշտոն.
4. Հավասարազոր պաշտոն՝	Դ. քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործում.

☐ 1) 1-Ա, 2-Բ, 3-Գ, 4-Դ.
☐ 2) 1-Բ, 2-Գ, 3-Դ, 4-Ա.
☐ 3) 1-Գ, 2-Դ, 3-Բ, 4-Ա.
☐ 4) 1-Բ, 2-Դ, 3-Ա, 4-Գ:

(4, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, հոդված 4, մաս 1, կետեր 6, 10, 11, 12)

4) Թեստային առաջադրանքի «**Հաջորդականության որոշում»** ձևը մշակելիս անհրաժեշտ է կազմել այնպիսի պնդումներ, որոնց տրամաբանական հաջորդականությունը խախտված է: Տրամաբանական ճիշտ կառուցվածք ստանալու համար անհրաժեշտ է պնդումները դասավորել ճիշտ հաջորդականությամբ (Օրինակ 4):

Օրինակ 4

Ձև 4. Հաջորդականության որոշում

Հարց 4

Դասավորե՛ք քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման գործողությունների փուլերը ճիշտ հերթականությամբ:

Ա. Մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացում.

Բ. Մրցույթի հարցազրույցի փուլի անցկացում.

Գ. Մրցույթի թեստավորման փուլի անցկացում.

Դ. Մրցույթ անցկացնող հանձնաժողովի ձևավորում:

1. Ա, Բ, Գ, Դ.

2. Գ, Ա, Դ, Բ.

3. Գ, Ա, Բ, Դ.

4. Ա, Գ, Դ, Բ:

(4, ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշում, գլուխներ 3, 4, 5, 6)

Նման ձևով ստուգվում են նաև թեստավորվողի արագ կողմնորոշվելու ունակությունը, տրամաբանությունը:

3. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Թեստային առաջադրանքները կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պահանջները՝

- Խուսափել միևնույն ձևաչափով թեստային առաջադրանքներ կազմելուց և հնարավորինս ապահովել ներկայացված ձևաչափերի համամասնությունը.
- Ղեկավար խմբի պաշտոնների համար հնարավորինս քիչ կիրառել թեստային առաջադրանքի «Այլընտրանքային ընտրություն» ձևը.
- Բացառել ոչ միանշանակ և բարդ ձևակերպումները, հարցերը շարադրել հնարավորինս պարզ և հասկանալի (Օրինակ 5):

Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն

Հարց 5

Եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա ե՞րբ է պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին:

☐ 1. Անհապաղ.

☐ 2. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

☐ 3. Եռօրյա ժամկետում:

(1, «Հանրային ծառայության մասին» օրենք, հոդված 33, մաս 5)

Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն

Հարց 5

Ե՞րբ է պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր իր վերադաս անձին ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին:

☐ 1. Անհապաղ.

☐ 2. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

☐ 3. Եռօրյա ժամկետում:

(1, «Հանրային ծառայության մասին» օրենք, հոդված 33, մաս 5)

➢ Խնդիրներն ու հարցերը ձևակերպել տրամաբանական կառուցվածքով (Օրինակ 6).

Օրինակ 6

Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն **Հարց 6** Ի՞նչ կարող է կիրառվել քաղաքացիական ծառայողի նկատմամբ՝ ☐ 1. Լրացուցիչ վերապատրաստում. ☐ 2. Լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում. ☐ 3. Նախազգուշացում: (2, 3, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, հոդված 20, մաս 1, կետ 5 և հոդված 21, մաս 2, կետ 1ա) ☒	**Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն** **Հարց 6** Խրախուսանքի ի՞նչ տեսակ կարող է կիրառվել քաղաքացիական ծառայողի նկատմամբ: ☐ 1. Լրացուցիչ վերապատրաստում. ☐ 2. Լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում. ☐ 3. Աշխատավարձի բարձրացում: (2, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, հոդված 20, մաս 1, կետ 5) ☑

➢ Ժխտողական կառուցվածք ունեցող առաջադրանքները կազմել հնարավորինս քիչ, ընդ որում՝ ժխտողական **«Չի», «Չէ», «Ոչ»** մասնիկները նշել մուգ տառերով, որպեսզի թեստավորվողն արագ ըմբռնի հարցի էությունը և չընկնի շփոթության մեջ (Օրնակ 7):

Օրինակ 7

Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն **Հարց 7** Նշվածներից ո՞ր դեպքում մարդուն չի կարելի ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի: ☐ 1. Առանց իր և իր ամուսնու համաձայնության. ☐ 2. Առանց իր ընտանիքի բոլոր անդամների համաձայնության. ☐ 3. Առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության: (3, ՀՀ Սահմանադրություն, հոդված 25, մաս 4) ☒	**Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն** **Հարց 7** Նշվածներից ո՞ր դեպքում մարդուն **չի** կարելի ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի: ☐ 1. Առանց իր և իր ամուսնու համաձայնության. ☐ 2. Առանց իր ընտանիքի բոլոր անդամների համաձայնության. ☐ 3. Առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության: (3, ՀՀ Սահմանադրություն, հոդված 25, մաս 4) ☑

- Պատասխանների տարբերակներում չկիրառել «Բոլոր վերոգրյալները ճիշտ են (ճիշտ չեն)», «Բոլոր հիմնավորումները ճիշտ են (ճիշտ չեն)», «Թվարկված պատասխանները ճիշտ են (ճիշտ չեն)» և նմանատիպ այլ ձևակերպումներ, քանի որ դրանց առկայության դեպքում ի հայտ չեն գա թեստավորվողի գիտելիքների ամբողջ խորությունը և պատահականության սկզբունքը կգերակայի (Օրինակ 8):

Օրինակ 8

Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն **Հարց 8** Ինչպիսի՞ պետություն է Հայաստանի Հանրապետությունը: ☐ 1. Ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է. ☐ 2. Ազգային, ժողովրդավարական, անկախ պետություն է. ☐ 3. Ժողովրդավարական, ազգային, իրավական, անկախ պետություն է. ☐ 4. Բոլոր վերոգրյալները ճիշտ են: (1, ՀՀ Սահմանադրության, հոդված 1) ☒	**Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն** **Հարց 8** Ինչպիսի՞ պետություն է Հայաստանի Հանրապետությունը: ☐ 1. Ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է. ☐ 2. Ազգային, ժողովրդավարական, անկախ պետություն է. ☐ 3. Ժողովրդավարական, ազգային, իրավական, անկախ պետություն է. ☐ 4. Իրավական, ազգային, ինքնիշխան, սոցիալական պետություն է: (1, ՀՀ Սահմանադրության, հոդված 1) ☑

➢ Պատասխանների տարբերակներում ճիշտ պատասխանի հետ միասին չնշել նաև մասնակի ճիշտ պատասխան, որպեսզի չստացվի հարց երկու ճիշտ պատասխաններով (Օրինակ 9):

Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն

Հարց 9

Ովքե՞ր կարող են մասնակցել քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող ներքին մրցույթին:

☐ 1. Տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայողները, ովքեր բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին.

☐ 2. Միայն տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայողները.

☐ 3. Միայն քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները.

☐ 4. Տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

(1, 4, ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշում, կետ 10)

☒

Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն

Հարց 9

Ովքե՞ր կարող են մասնակցել քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող ներքին մրցույթին:

☐ 1. Յուրաքանչյուր ոք.

☐ 2. Միայն տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայողները.

☐ 3. Միայն քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները.

☐ 4. Տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

(4, ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշում, կետ 10)

☑

Ձև N 1

ԹԵՍՏՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

NN ը/կ	Պաշտոնի ենթախումբը	Մասնագիտական գիտելիքներին վերաբերող առաջադրանքների թիվը (տոկոս)	Կոմպետենցիաների ն վերաբերող առաջադրանքների թիվը (տոկոս)
1.	Ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբեր	30	70
2.	Ղեկավար պաշտոնների 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթախմբեր	40	60
3.	Մասնագիտական պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբեր	60	40
4.	Մասնագիտական պաշտոնների 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթախմբեր	70	30